ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ-2

ՀՀ քննչական կոմիտեի կարիքների համար գնումների ARMEPS էլեկտրոնային համակարգի միջոցով ավտոմեքենաների լվացման ծառայությունների ձեռքբերման նպատակով ձևավորված ՀՀ ՔԿ ԳՀԾՁԲ-ԱԼ-25/1 ծածկագրով գնանշման հարցման ընթացակարգի գնահատող հանձնաժողովի նիստի

ք.Երևան,Մամիկոնյանց 46/5

27 դեկտեմբերի 2024թ.
ժամը՝ 15:00

Մասնակցում էին՝

Հանձնաժողովի նախագահ՝
Հանձնաժողովի անդամներ՝ Ա. Ազարյան, Ա. Թումանյան, Ա. Եղիազարյան, Մ. Անտոնյան
Հանձնաժողովի քարտուղար՝ Ս. Նազարյան

Հանձնաժողովի նիստին նախագահի մասնակցության անհնարինության պատճառով՝ համաձայն ՀՀ կառավարության 2017 թվականի մայիսի 4-ի N 526-Ն որոշմամբ հաստատված «Գնումների գործընթացի կազմակերպման» կարգի 26-րդ կետի 1-ին ենթակետի, նիստը նախագահում էր ըստ հանձնաժողովի կազմում ընդգրկման առաջնահերթության նախագահի թեկնածուից հետո նշված նիստին ներկա հաջորդող թեկնածու Արմեն Ազարյանը:

1. Տեղեկատվություն գնման հայտով սահմանված՝ Ընթացակարգի շրջանակում գնվելիք ծառայության գնի վերաբերյալ

Չափաբաժնի համարը	Չափաբաժնի անվանումը	Գնման հայտով սահմանված գնվելիք ծառայության առավելագույն գինը՝ մեկ թվով արտահայտված (ՀՀ դրամ)
1	**ավտոմեքենաների լվացման ծառայություններ**	**մինչև 1 000 000**

2.Հայտեր ներկայացրած մասնակիցների անվանումները և գտնվելու վայրի հասցեները

«ՀՀ ՔԿ ԳՀԾՁԲ-ԱԼ-25/1» ծածկագրով ընթացակարգին ներկայացրած հայտերը բացվել են ARMEPS գնումների էլեկտրոնային համակարգի միջոցով հրավերով սահմանված հայտերի ներկայացման վերջնաժամկետին: Հայտ են ներկայացրել հետևյալ կազմակերպությունները.

Հ/հ	Մասնակցի անվանումը	Հասցեներ
1	**«ՎԵԳԱՍ ՄՈԹՈՐՍ» ՍՊԸ**	ՀՎՀՀ՝ 01038207, ք. Երևան, Նոր-Նորք, Նորք թաղամաս 1-ին նրբանցք 58/2, հեռ. 077-88-26-88, vegasmotors48@gmail.com
2	**«Սուսաննա Յայլոյան Վլադիմիրի» Ա/Ձ**	ՀՎՀՀ՝ 35331065, ք. Երևան, Նաիրի Զարյան 22ա, հեռ. 055-30-04-99, aladetailingcenteryerevan@gmail.com
3	**«Արմեն Պողոսյան Շայսեվանի» Ա/Ձ**	ՀՎՀՀ՝ 43177951, ք. Երևան, Վաղարշյան փող. 1/5, հեռ. 093-30-61-61, 999carwash999@gmail.com

3. Տվյալներ բացված յուրաքանչյուր հայտում պահանջվող փաստաթղթերի առկայության մասին

3.1. Մասնակցի կողմից էլեկտրոնային ձևով ներկայացված հայտում առկա է հրավերով պահանջվող փաստաթղթերը:

4.Տվյալներ յուրաքանչյուր մասնակցի ներկայացրած փաստաթղթերի՝ հրավերի պայմաններին համապատասխանության վերաբերյալ

4.1 Հանձնաժողովն ուսումնասիրելով մասնակիցների կողմից ներկայացված հայտերը արձանագրեց, որ **«ՎԵԳԱՍ ՄՈԹՈՐՍ» ՍՊԸ-ի կողմից ներկայացված** հայտը չի համապատասխանում հրավերով սահմանված պահանջներին: Գնման հայտով ներկայացված ավտոլվացման կայանի գործունեության հասցեն նշված է ք. Երևան, Նոր-Նորք, Նորք թաղամաս 1-ին նրբանցք 58/2, որը չի համապատասխանում հրավերով սահմանված պահանջներին: Համաձայն հրավերի պահանջի ավտոլվացման կայանը պետք է գտնվի ՀՀ ք. Երևան, Մամիկոնյանց 46/5 հասցեից առավելագույնը 3 կմ շառավղով հեռավորության վրա (ավտոմեքենայի ճանապարհով): Երկրորդ և երրորդ տեղ զբաղեցրած մասնակիցների հայտերում անհամապատասխանություններ չեն արձանագրվել:

Հիմք ընդունելով վերոգրյալը հանձնաժողովը որոշեց ղեկավարվելով ՀՀ կառավարության 2017 թվականի մայիսի 4-ի N 526-Ն որոշմամբ հաստատված «Գնումների գործընթացի կազմակերպման» կարգի (այսուհետ՝ Կարգ) 42-րդ կետով մերժել «ՎԵԳԱՍ ՄՈԹՈՐՍ» ՍՊԸ-ի հայտը և հաջորդող տեղ զբաղեցրած մասնակցին՝ «Սուսաննա Յայլոյան Վլադիմիրի» Ա/Ձ-ին հաղթող ճանաչելու մասին հարցը քննարկել հաջորդ նիստում:

5. Հանձնաժողովի հաջորդ նիստի վայրի, օրվա և ժամի մասին

Հանձնաժողովը որոշեց նիստը շարունակել 10.01.2025թ. ժամը 14:00-ին, ք. Երևան, Մամիկոնյանց 46/5 հասցեում:

Ընդունվել է որոշում կողմ՝ 4, դեմ՝ 0:

6. 10.01.2025թ. ժամը 14:00-ին նիստը վերսկսելու վերաբերյալ

Նիստը վերսկսվեց 10.01.2025թ. ժամը 14:00-ին:

7. Յուրաքանչյուր մասնակցի առաջարկած գինը և գնման հայտով սահմանած գինը

Չափաբաժին 1 *Ավտոմեքենաների լվացման ծառայությունների ձեռքբերում*					
Հ/Հ	Մասնակից	Գնման հայտով սահմանած առավելագույն գին	Գինն առանց ԱԱՀ	ԱԱՀ	Ընդհանուր Գին
1	**«Սուսաննա Յայլոյան Վլադիմիրի» Ա/Ձ**	1 000 000	892 500	-	892 500
2	**«Արմեն Պողոսյան Շայսեվանի» Ա/Ձ**		990 675	-	990 675
	«ՎԵԳԱՍ ՄՈԹՈՐՍ» ՍՊԸ		833 000	166 600	999 600

8. Տվյալներ հրավերի վերաբերյալ կատարված հարցումների, պատասխանների և հրավերում կատարված փոփոխությունների մասին

Հրավերի վերաբերյալ հարցումներ, պատասխաններ չեն եղել: Հրավերի փոփոխություն չի կատարվել:

9. 10.01.2025թ. Հանձնաժողովը որոշեց՝

9.1 «ՀՀ ՔԿ ԳՀԾՁԲ-ԱԼ-25/1» ծածկագրով մրցույթի 1-ին տեղ զբաղեցրած մասնակից ճանաչել բավարար գնահատված հայտ ներկայացրած մասնակից **«Սուսաննա Յայլոյան Վլադիմիրի» Ա/Ձ-ին:**

9.2 Հաստատել «ՀՀ ՔԿ ԳՀԾՁԲ-ԱԼ-25/1» ծածկագրով գնման ընթացակարգի արդյունքում 1-ին չափաբաժնի մասով պայմանագիր կնքելու որոշման մասին հայտարարության տեքստը համաձայն հավելվածի:

9.3 «ՀՀ ՔԿ ԳՀԾՁԲ-ԱԼ-25/1» ծածկագրով գնանշման հարցման գնման ընթացակարգի ընտրված մասնակցին առաջարկել անգործության ժամկետի ավարտից հետո օրենքով սահմանված կարգով 5 աշխատանքային օրվա ընթացքում ներկայացնել պայմանագրի և որակավորման ապահովում տուժանքի ձևով՝ հրավերով սահմանված կարգին համապատասխան:

Ընդունվել է որոշում՝ կողմ՝ 4, դեմ՝ 0:

Մասնակցում էին՝

Հանձնաժողովի նախագահ
Գնման Պատասխանատու/ Գնահատման աշխատակազմի պատասխանատու (**ԳՊ/ԳԱՊ**)

անդամներ՝

1.Գնման Պատասխանատու/ Գնահատման աշխատակազմ (ԳՊ/ԳԱ) — Արմեն Ազարյան

2.Գնման Պատասխանատու/ Գնահատման աշխատակազմ (ԳՊ/ԳԱ) — Աննա Թումանյան

3.Գնման Պատասխանատու/ Բացման աշխատակազմ (ԳՊ/ԲԱ) — Արա Եզիազարյան

4.Գնման Պատասխանատու/ Բացման աշխատակազմ (ԳՊ/ԲԱ) — Մերի Անտոնյան

5.Գնման Պատասխանատու/ հանձնաժողովի քարտուղար (ԳՊ/ՄՀմ) — Սիրուշ Նազարյան